ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
հեռ. (0237)7.23.79

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ МРГАШАТ

« 15 » Նոյեմբերի 2011 թ. N 164

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն Ա. Ղահրամանյան*

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 9-ին կայացած N 7 նիստի որոշումները:

*Առդիր 8 էջ*

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10780-11
«15» 11 2011 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 09 » Նոյեմբերի 2011թ. N 7

## *ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. *Հաստատել օրակարգը՝ համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ*

Ա. Հակոբյան ---------------------------- /ստ./
Ա.Հովհաննիսյան ---------------------------- /ստ./
Ա. Բաղալյան ---------------------------- /ստ./
Վ. Հակոբյան ---------------------------- /ստ./
Ռ. Մովսիսյան ---------------------------- /ստ./
Ս. Խլղաթյան ---------------------------- /ստ./
Վ.Վարդանյան ---------------------------- /ստ./
Ա.Հարությունյան ---------------------------- /ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

*Կ. Տ.*

*2011 թվականի*
*Նոյեմբերի «15»*
*գ. Մրգաշատ*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 09-ի N 7 ՆԻՍՏԻ
N 1 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 7 նիստի*

1. *Օրակարգի հաստատում:*
2. *Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին :*
3. *Համայնքի մատուցած ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2012 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին :*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
հեռ. (0237)7.23.79

РЕСПУБЛИКА АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЪ
МУНИЦИПАЛИТЕТ МРГАШАТ

# ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 09 » ՆՈՅԵՄԲԵՐ 2011թ. N 2-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով

*Համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:

*Ավագանու անդամներ՝*

Վ.Հակոբյան
Ա.Հարությունյան
Ռ.Մովսիսյան
Ա.Հովհաննիսյան
Ա.Մարկոսյան
Վ.Վարդանյան
Ս.Խլղաթյան
Ա.Հակոբյան

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 08-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝նոր շենքերի,շինությունների (ներառյալ՝ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10000 /տաս հազար/ դրամ:

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝15000 /տասնհինգ հազար/ դրամ.
բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000 /քսանհինգ հազար/ դրամ.
գ. 1001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝30000 /երեսուն հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտներ վերակառուցման,ուժեղացման,վերանորոգման,արդիականացման,աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, երբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000/մեկ հազար/ դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի

ցարարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

3) նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի ցարարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը):

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2000/երկու հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝1500/մեկ հազար հինգ հարյուր/դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝1500/մեկ հազար հինգ հարյուր/դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտրի կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝350դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000/մեկ հարյուր հիսուն հազար/դրամ:

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել 50000/հիսուն հազար/դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000/քսանհինգ հազար/դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000/հիսուն հազար/դրամ
3) բաղնիքների,(սաունաների) համար՝ 200000/երկու հարյուր հազար/դրամ
4) խաղատների կազմակերպման համար՝ 500000/հինգ հարյուր հազար/դրամ
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000/երկու հարյուր հիսուն հազար/դրամ
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000/մեկ հարյուր հազար/դրամ

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տրամադրելու թույլտվության համար 1քառ.մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000/մեկ հազար/դրամ

2) թույլ ալկահոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500/երկու հազար հինգ հարյուր/դրամ

3) այլ արտադրանքի գովազդի համար՝ 500/հինգ հարյուր/դրամ

4) դատարկ գովազդային վահանակների համար՝700/յոթ հարյուր/դրամ:

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000/մեկ հազար/դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝5000/հինգ հազար/դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար՝5000/հինգ հազար/դրամ:

11.Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 1000/մեկ հազար/դրամ:

12.Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 5000/հինգ հազար/դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
հեռ. (0237)7.23.79

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ МРГАШАТ

# ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 09 » ՆՈՅԵՄԲԵՐ 2011թ. N 3-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջներով

***Համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2012 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:

***Ավագանու անդամներ՝***

Վ.Հակոբյան
Ա.Հարությունյան
Ռ.Մովսիսյան
Ա.Հովհաննիսյան
Ա.Մարկոսյան
Վ.Վարդանյան
Ս.Խլղաթյան
Ա.Հակոբյան

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 08-Ի N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Արմավիրի մարզի «Մրգաշատի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մեկ երեխայի մեկ ամսվա ծնող գումարը սահմանել 2000(երկու հազար) ՀՀ դրամ:
2. Արմավիրի մարզի «Մրգաշատի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի մեկ երեխայի մեկ ամսվա ուսման վարձը սահմանել.

1) Նախապատրաստական դասարանի համար 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:
2) 1-7-րդ դասարանի համար 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:
3) Երկրորդ գործիք-երգեցողության ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ վարձավճար 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: